



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



3433

281

G-16

1854

V-24 L

17  
24

Amherst

Zachariah

1001

Faint, illegible markings at the top of the page.

Handwritten purple ink markings, possibly a signature or initials, including a horizontal line and a character resembling '8' or 'r'.

Faint, illegible markings at the bottom left of the page.

280

281  
6-16 us.

951-24

2012

# Խ Թ Է Ն



Ընդդեմ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ՔՐԻՍՏՈՍԱՀԻՄՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՄԲ

ԵՔԵՑՈՂԵՑ

(1005)  
20314



19766-59

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՅԵՏԵՅԱՆԻ

ՌՅԳ-1854

Երբ որ հակառակութիւն մտաւ Առաքելոց մէջը  
Թէ՛ ո՛վ իրենց մէջը մեծ պիտի համարուի, տե՛ս  
ինչ կ'ըսէ սուրբ Աւետարանը .

Յորժամ նստաւ, կոչեաց զերկուսասանս, և ասէ ջնոսա . Եթէ որ  
կամի առաջին լինել, եղևցի ամենեցուն կրտսեր և ամենեցուն  
պաշտօնեաց (Մատ. Թ. 34) :

Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որք իշխենն նոցա . բարերարք  
կոչին . այլ դուք ո՛չ այնպէս, այլ որ մեծն է 'ի ձեզ, եղևցի իբրև  
կրտսերն, և առաջնորդ՝ իբրև սպասաւորն (Ղու. Իբ. 24, և  
Մատ. Ի. 25) :

Բայց դուք մի զօք կոչէք վարդապետ . զի մի է ձեր ուսուցիչն . և մի  
կոչիցէք ուսուցիչք, զի ուսուցիչն ձեր Քրիստոս է (Մատ. Իգ. 8,  
10) :

Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղևցի կապեալ յերկինս . և  
զոր արձակիցէք յերկրի՝ եղևցի արձակեալ յերկինս : Դարձեալ  
ասեմ ձեզ, թէ երկու 'ի ձէնջ մարանիցեն յերկրի վասն ամենայն  
իրաց, զինչ և խնդրեցեն, եղևցի նոցա 'ի հօրէ իմմէ, որ յերկինս  
է . զի ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ  
և ես 'ի մէջ նոցա (Մատ. Ժը. 18) :





Խոնարհեալ անսխարդ Կայսրն օր(կա-  
 րանդանոս) եկն ահիւ. Տնուա առ-աջի օր  
 Լուսա-որդիս, և Իժմաւոյ իջեալ հաճաք-  
 եաց զբարձա Կայսրն :  
 Աղաթ. Ի Թոմոս Դարն.

Ահր՝ աղաթեմք զքեզ (ուր Կայսրն ըստ Ահր-  
 ըտարս) սիւնդ սուսանտեղի անձ աշխար-  
 հի : ոսո՛ մեզ զհաւասար մեքոյ զգա-  
 ւանու իրեն, և աղօթեան զնո անձ աշխար-  
 հի :  
 Ինչոք թոմոս Դարն.

Խ Թ Ը Ն

Ը Ն Դ Դ Ե Մ

Ճ Շ Մ Ը Բ Տ Ո Ի Թ Ե Ը Ն

Ը Բ Ը Ց Ո Ղ Ը Ց



Այսու համար օտու թեամբ աղղ առնմբ Հայկաղ-  
նեանս նախահաւատ քրիստոսադաւան լուսաւորչածին  
աղղին մերոյ զգուշանալ բերանօք օրհնող և սրտիւք ա-  
նիծանող մերձաւոր բարեկամներէն :

Որովհետև ՚ի բնուստ անտի անպակաս են  
մեր երկայնամիտ և անոխակալ Ազգին վրայ ար-  
ձակեալ քարինք՝ մեր համազգի, հայրենակից և  
հաւատակից բարեկամներէն, որոնք որ անջատեալ  
են իրենց հարազատ Սօրմէն՝ այսինքն Հայաստա-  
նեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ կենսաբաշխ  
գրկէն, որուն անմոռանալի հոգիազատ երախտիք  
ները, իրենք անձնահաճ կամօք մոռանալովսին և  
ազատու թեան մէջ հանգիստ կեանք վարելնուն  
համար, անոնցմէ ոմանք օտար տէրու թեան դրօ-  
շակի տակ փախած զօղած՝ անկէ իրենց հին և նոր  
ազգատեցու թեան յիշատակու թիւնները գործով  
նորոգելով, խռովու թե և վերաւորու թե նետեր  
և քարեր կ'արձակեն մեր անարատ հարսին քրիս-  
տոսահիմն սուրբ եկեղեցւոյն, քրիստոսընդդէմ  
եղբայրատեցու թիւներ և ներհակու թիւններ ցու-  
ցունելով թե բանիւ և թե գայթաղեցուցիչ գիր-  
քերով, որոնց մէջը միշտ իրենք զիրենք լուսա-  
ւորու թեան վերջի ծայրը հասած կը ցուցունեն,

բայց իրենց լուսաւորութեան պտուղ՝ ինքնա-  
հաւանութիւններէն, ներհակութիւններէն, և  
ազգիս մէջը հաւատոյ վրայօք խռովութիւններ և  
գայթակղութիւններ սերմանելէն ուրիշ՝ Աստու-  
ծոյ և մարդոյ հաճելի բարի պտուղ մը չենք տես-  
նար 'ի բնուստ անտի :

Ահ, Հայոց առաքելաշաւիչ վարդապետք • ուր  
էք • դեռ Վեստեմանի ձորին մէջն էք • հերիք չե՞-  
որ ննջէք • զարթիք, սթափեցարձեք, տեսէք ձեզմէ  
հեռացած եղբարցմէ՝ առջևնիդ նոր բացած համ-  
բուրման և ՂՅրիստոս յափշտակելոյ տեսարան-  
ները • 'ի վերայ հասէք և քաջ նկատողութեամբ  
զննեցէք իրենց պատկերները • քանզի հիներէն  
զատ՝ ահա հիմա ալ Վեննայի վանքի միաբան Հ.  
Աղեքսանդր Պալճեան, որուն անունը ճակատին  
վրայ դեռ իր քաղցրիկ և բարերար հայրենեաց  
մեղրը կը կենայ :

Աս հռովմէագաւան վարդապետը՝ հիմա իրեն  
և իր նմանեաց հին և նոր ազգատեաց վիճաբա-  
նութեանց կրից յարմար՝ գիրք մը թարգմաներ է  
յանգղիականէ • որոյ հեղինակը անգղիացի Թովմաս  
Վուլիէլմոս Ալայս անուն մէկը • բայց ոչ այնքան  
հեղինակին կրից պտուղը ցուցունելով՝ որքան որ  
իրեն նախանձու և վիճաբանատէր կրից պտուղնե-  
րը գրքին մէջը յաւելցնելով : Աւ նոյն գրքին ճա-  
կատն ալ չորս անուն կնքած է, այսինքն՝ Ա. Բոս-  
Ս. Պարոտի առաքելապետի • հին եկեղեցոյ, աղէի-ր երա-  
ւաբանութեան և կենդրոն մոսկիտի • Ա'երևայ թէ աղ-  
բիւր իրաւաբանութեան ըսածը կը հասկըցընէ ի-  
րենց անսխալութիւնը, որով միշտ կը պարծենան •  
Քանզի նոյն գրքին յաւելուածին մէջը ուրիշի մը

բերնով կը հաստատէ թէ՛ սուրբ գահին վճիռ-  
ները անտալ են, անանակիտ ազգիւրներէն յատակ  
ջուրեր կը ծարեն, և այլն ։

Բայց անմեկը հիմա թէ այս չորս անունով գրք-  
քին կամաց կատարումն, կամ ներգործութիւնը  
(իճրան) որ ժամանակի և դարի մէջ եղածով կը  
պարծենայ բոլոր քրիստոնէից վրայ ։ Եթէ անցեալ  
ժամանակներով մինչև հիմա պիտի հասկըցնէ,  
յայտնապէս սուտ է ։ քանզի նախապէս եթէ  
Պետրոս առաքելոյն անձուք Հռովմայ մէջն է,  
տոկորութիւն ըրած էին իրենց մէջը կը խաբէին,  
հիմա անոր սուտ թիւնը ալ յայտնի եղաւ աշ-  
խարհի, և ալ չձածկուիր ըստ առածին ։ “Տէգն  
’ի քրճանն ոչ զեռեղի, և ոչ փակի կարկատանաւ  
լայն ծակասի ։” ալ Վաւրիւնսիւ Հաստատուիր  
և շիրտ աքանուիր ։ քանզի թէ իրեն իսկ Ս. Պե-  
րոսին և իր համապատիւ և համիջասե եղբայր  
առաքելոց գործքերէն, և թէ իրենց վասն հա-  
ւատոյ շրջաբերական նամակներէն անեռե ին յայտնի  
և բացարձակի յիշատակութիւն մը չկայ ասոր  
վրայօք ։ Ապա Ս. Վրբերէն գուրա՛ նորամուտ և  
նորահնար գրքերուն վրայու թեամբը, որոնք որ  
դեռ վրայու թեան կարօտ են, և անհիմն փաս-  
տերով մեծ իշխանութի մը ընդունիլը կամ հա-  
ւատք ընծայելը՝ մեծ տկարութիւն և անիրաւա-  
բանութիւն է ։ Թող կարգան մեր Վարեկին մեկ-  
նութեան Հ գլուխը ։ ուր կ’ըսէ ։ “Օանհր, զի  
Պետրոս կ’ըսուի վէ՛մ իր վիմական դաւանութիւր  
համար, որ ըսաւ առ Տէրն ։” Վաւ ես որդի Ար-  
տուճոյ կենդանւոյ ” ։ . . . . առ դաւանութեան վրայ  
չինեցաւ կաթուղիէ եկեղեցին ընդհանուր հա-  
ւատացելոց ժողովով ։ Աւ մի ասիցեն ոմանք թէ  
այն եկեղեցին է Հռոմ կամ ’ի Հռոմ շինեցեալն ։  
զի նախ քան զշինումն եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի  
’ի Հռոմ՝ առաքելալք եղին ’ի հանգանակն հաւա-

տայ թէ՛ հաւատաւք ՚ի կաթաւղիկէ եկեղեցի : Աւ  
 դեռևս Պետրոս կենդանի էր յայնժամ . և դեռ  
 ( ըստ իրենց կարծեաց ) Պետրոս Հռոմ գացած  
 չէր , և յանուն սրբոյն Պետրոսի եկեղեցին շե  
 նուած չէր . . և Պետրոս նախ Ղնախոք կառայց  
 դեկեղեցին . և կոչեաց զաշակերտեալսն ըրիստո  
 նեայս : Արեմն առաքելական և կաթաւղիկէ ա  
 նունս գոյր ՚ի ժամանակէ անտի առաքելոցն : Աւ  
 Պետրոս քնդ միւսոցն առայ և դաւանեաց և հա  
 ւատաց ՚ի մի միայն կաթաւղիկէ և առաքելական  
 սուրբ եկեղեցի . որ էր յայնժամ համախմբու  
 թիւնն առաքելոց զհանգանակն հաւատոց շարա  
 դրոցոց , յորոց մինն էր և ինքն Պետրոս , որ ոչ  
 կարէր լինել միանգամայն գլուխ և մասն : Այլ  
 երեքին մէջը , նաև Պօթոս Հռովմայու քահանա  
 յապետեբու սրայօք խօսելով , Ա . Պետրոսի հա  
 մար ալ կրտէ . “ Առաջին եպիսկոպոս Ղնախոքայ ,  
 ուր նստաւ , առէ , եօթն ամ , և նախ անդ կառայց  
 դեկեղեցի : Արեմն Հռովմ ոչ է առաջին ամենայն  
 եկեղեցեաց , թէպէտ ՚ի ժողովն կոստանդնուպոլ  
 ոց ետան զպատիւ նախկնու թեան , ( զոր նախ  
 չունէր ) բայց եթէ մնայր ՚ի դաւանութեանն Աե  
 կիոց , եթէ կամօք չորից պատրիարքոցն ելանէին  
 աթոռակալքն յաթոռն Պետրոսի , եթէ իր դաւա  
 նուիր գրեալ յդէր առ չորս պատրիարքական Մթոռս ,  
 ըստ վկայուէ Զովհաննու Բանասկեցւոյն իր վիճա  
 բանութեան երրորդ դրքին մէջը , որ է ընդ դէմ  
 Հռովմայեցւոց : Իսկ Թահուկ պատմագիրն ալ  
 կրտէ , Պետրոս սուրբ Արուսաղէմ քաղաքին մէջը  
 չորս տարի նստաւ քահանայապետական աթոռը .  
 ուրեմն աթոռն Արուսաղէմի ըստ ժամանակին ա  
 ռաջին եղև քան զՂնախոքայն և քան զՀռովմայն :  
 Աւկրորդ՝ կը հեռևի ստուգիւ ապս և հիմն էկե  
 ղեցոյ , որ յանուն նորա՝ սուտ . եթէ չէ գլուխն՝  
 մարմինն մեռեալ է : Այն , կ'իրաւարանեմք յա

նուն V. Կեարոսի շինեալ ըլլայ եկեղեցին , ինչպէս  
 ամէն եկեղեցիք մէկ մէկ սուրբի անունով շինեալ  
 են : Իայց անմեցմէ հեռաւիր թէ նայն սուրբը  
 հոն նահատակուեր է , կամ գերեզմանը հոն է  
 և կամ հոն տեղը իր սրբութեան պաշտօնը վարեր  
 է . քանզի Վան քաղաքին մէջն ալ Վոզոս Կեարոս  
 անունով գմբէթաւոր հոյակապ հին եկեղեցի մը  
 կայ , նմանապէս և ուրիշ շատ քաղաքներու մէջ :

Արքայի՛ աղէիւր իրաւաւորութեան ըսածն ալ , որ ինչ  
 պէս բոնիք , զուցէ անսխալութիւնը պիտի հաս  
 կրցունէ , բոլորովին բռնած ճամբանին Ատուծոյ  
 դէմ է , և յայտնի անիրաւաբան : Բանդի որով  
 հեռաւ մարդ են , անհնար է որ անիրաւաբան  
 կամ սխալական ջրքան . եթէ հրեշտակք անիրաւ  
 ւեցան կամ սխալեցան և անկան Ատուծոյ երեւ  
 սէն , եթէ աշխարհասէր մեղատյակ բնութիւնը՝  
 մէկ աւուր մէջ եօթանասնեկի եօթն անգամ սը  
 իալել տալով , ըստ բնականին տկարութեան կամ  
 սխալութեան թերադրեց մարդոյս մեղանչել բող  
 դէմ Ատուծոյ , և աստուածային օրինաց ինչ և  
 կցէ մեղօք , ապա Հաովմայ պապերը միթէ մարդ  
 չեն , Կեարոս առաքեալէ ն ալ կը գերադանցանան ,  
 որն որ ամէն առաքեալներէն շատ իր իրաւաբա  
 նութիւնը կորսնցընելով սխալեցաւ , մինչև որ  
 յանդիմանուեցաւ Յիսուսէն . « Երբ յետս իմ ,  
 աստանայ , զի ոչ կամիս դու զԱտուծոյն , այլ  
 զմարդկան » . անիրաւաբան գանուեցաւ նաև իր  
 տուած խօսքին վրայ շնաշուն համար , որ պար  
 ծենալով ըսաւ Յիսուսին . « Թէ և մեռանել ալ  
 հասնի ինձի , քեզի չի պիտի ուրանամ , քեզի չի  
 պիտի թողում » . և ապա երեք անգամ ուրացաւ  
 զՅիսուսը , և այն տկար աղջիկէ մը , որ ամէնէն  
 մեղադրելին է : Աչ ապաքէն և իր անիրաւաբար  
 ընթացից և մարդկօրէն սխալմանցը համար յան  
 դիմանուեցաւ նաև Վոզոս առաքեալէն : քանզի ,

կ'ըսէ, հեթանոսաց քարազու թեան գնացած ժա-  
 մանակը, անոնց հետք անխափ կ'ուտէր կը խմէր,  
 և երբ որ ոմանք Յակոբ առաքելային քովէն Պետ-  
 րոսին քովը գացին, անոնցմէ վախցան, սկսաւ  
 կեղծաւորութեամբ հրովորիլ հեթանոսաց կե-  
 րակուրներէն. ինչու որ անոնք Հրեայ էին, և  
 իր հետք ուրիշ Հրեաներ ալ, մինչև անգամ և  
 Քառնարարք անոնց հետ կեղծաւորեցան: Այլ  
 երբ որ տեսայ, կ'ըսէ Պօղոս առաքելալ, թէ ուղիղ  
 չեն երթար Ալեքսանդրիս ճշմարտութեանը, ա-  
 մենուն առջև յանդիմանելով զՊետրոսը, ըսի.  
 Դու որ Հրեայ ես, հեթանոսաբար կը վարուիս,  
 հապա ինչպէս հեթանոսներուն կ'ըստիպես որ հը-  
 բէաբար փարսին. չէ որ մենք բուն Հրեայ եմք,  
 ու հեթանոսաց մեղաւորներէն չեմք (Մառ. ք. 11):  
 Յիսուս ինքը պատուիրեց աշակերտաց որ համբե-  
 րեն անիրաւութեան և տանջանաց. «Թէ որ մէկ  
 երեսիդ դարնեն, համբերելով դարձուր և միւ-  
 ր »: Քայց երբ որ Պիղատոսին առջևը իրեն դար-  
 կին, լուռ չմնաց և միւս երեսը չդարձուց, այլ  
 իրաւունք փնտռեց, ըսելով. «Թէ որ չարութիւն  
 դորձեցի՝ փրայեան փան չարին. ապա թէ ոչ՝ ինչո՞ւ  
 կը դարնես »: Ասով Յիսուս անիրաւաբան գրա-  
 նուեցաւ ըսել չէ, քան վեցի. այլ ցուցուց մարդ-  
 կային բնութեան տկարութիւնը:

Այլա մարդն ո՞վ է որ իրաւաբանութեամբ ան-  
 սխալ մնայ միշտ, և մանուանդ երբ որ դատաւո-  
 րութեան պաշտօն ունենայ: Այ՛ն, Հռովմայու-  
 պապերը թեթեւ բաներով չեն անիրաւաբանի  
 ու սխալի, այլ ծանր անդ թու թիւններով. ու-  
 բոնց մէկը հոս յիշել արժան է: Քանզի մօտ ու-  
 բերս ստուգիւ լուեցաւ՝ որ պանդուխտ օտա-  
 բաղդի քրիստոնեայ մը իրենց Հռովմ' քաղաքին  
 մէջը բնական մահուամբ մեռնելով, ներկայ ժա-  
 մանակիս պատը արժան չտեսեր է, որ ըստ օրինի

քրիստոնէից քաղաքին մէջը թաղուի՝ իմ քաղաքս  
սուրբ է, բսելով. այլ նոյն քրիստոնէին մարմինը  
որպէս զի գազանի կամ անասնոյ քաղաքէն գուրս  
նետեի տուեր է, ինչպէս օրագիրներով ալ հրա-  
տարակեցաւ աշխարհի: Քրիստոս Տէրն մեր խո-  
նարհեցաւ աշակերտաց ոտքը, և լուաց. բայց  
Հռովմայ պապերը կ'ուզեն որ բոլոր քրիստոնէոյ  
ազգք իրենց խաչակիր պատուանդանին երկրպա-  
գուծիւն ընեն, ինչպէս որ իրենց ազգին պագ-  
ցունել կու տան և կը խրոխտան գերազանցանալ  
միանգամայն ամենայն առաքելայաջորդ հովուա-  
պետաց վրայ. որն որ ոչ Քրիստոս ըրաւ, ոչ  
համապատիւ առաքեալք իրարու, և ոչ անոնց  
յաջորդ սբազան չարք:

Վերջապէս այնքան անսխալ են իրենց վարուց  
և պաշտօնին մէջը, մինչև բոլոր քրիստոնէոյ ազ-  
գաց մէջ ծաղրելի առած մը եղած է ստաստաց  
և սխալողներուն բսել. « պապ ըլլալով՝ Տարր էս եղէր »:  
Ուրեմն ըստ իմաստնայն առածին « Մի գովեսցէ  
զքեզ բերան քո. քանզի վկայութիւն դանձնէ չի  
ընդունելի: »

Իսոյց մենք աւետարանական ճշմարտուէ ուրիշ  
աղբիւր իրաւաբանութեան կամ անսխալութեան  
չենք ճանաչեր և չենք ընդունիր, զորոնք քարո-  
զող հովիւներուն հնազանդ ենք, և իբրև առա-  
քեալ կ'ընդունինք. բայց երբ որ անոնք ալ ելն  
կամաւ և եթէ ակամայ ճշմարիտ իրաւաբանութիւն  
խտորին ըստ մարդկային սխալականութեան, ա-  
նոնց խտորեալ ճանապարհէն օրէնքը չի ծռուիր  
և եկեղեցին չի յուսահատիր. այլ միայն ճշմարիտ  
և իրաւաբան քարոզութեանց ունկնդիր կ'ըլլանք  
և գործքերնուն չենք հետևիր. սրովհետև Յի-  
սուս Քրիստոս սրտապէտան Նստուած անանկ հո-  
վիւներուն համար ըսաւ. « Օր ինչ ասացեն  
արասցիք, բայց զկնի նոցա մի երթիջիք, զի ասեն

և ոչ առնեն : Բայց է որ բանիւ կ'իրաւարան  
նեն և գործով ալ կ'անիրաւարանեն ու կը սխա  
լին :

Չորրորդ՝ Կենդրոն Տոմարի կ'ըսէ, բայց մենք մի  
ուժեան կենդրոնութիւն մը չտեսեր ենք երբեք  
իրենց գործոց և քարոզութեանց վրայ : քան զի  
մենք ճշմարիտ կենդրոն միութեան՝ միայն Յիսու  
սի Քրիստոսի սահմանած կենդրոնը գիտենք, որ  
ցուցուց մեզի ասելով. « Ամենայն օրէնք և սրա  
տուիրանք 'ի մի բան կատարին՝ 'ի Արեւոյնս զըն  
կերն քո իբրև զանձն քո . » կամ թէ « Այսու  
ճանիցեն զձեզ եթէ իմ աշակերտք էք, եթէ սի  
րիցէք զմիմեանս . » այսինքն՝ եթէ իմ սիրոյս կեն  
դրոնին վրայ կենաք՝ բայց ասոնց կենդրոն միու  
թեան ըսածը՝ մինչև հիմայ կենդրոն խռովութե  
կենդրոն Քրիստոսական եկեղեցւոյ բաժանման,  
կենդրոն եղբայրատեցութեան ըլլալը՝ ի բնուստ ան  
տի յայտնի է : Աւրեմն ասանկ անգործ անուանե  
րուն մինչև հիմայ սուտ է ըսելնուս՝ ճշմարիտ ի  
րաւարան ենք :

Այս եթէ ասպագայ ժամանակներով կը սարժե  
նան աս մեծամեծ անուանց ներգործուի կամ կատա  
րումն ըլլալը՝ ան ալ միայն Աստուծոյ գիտնալու բանն  
է . քանզի ասպագային չարն ու բարին գիտնալը  
մարդոյս գործ չէ . ամենայն իրաց սկիզբն և մէջը  
գովելի չէ, այլ վախճանը : Քանզի յառաջ քան  
զձնունդն՝ անուանակոչութիւնը սխալ կ'ըլլայ .  
անուանն առանց գործոյ՝ մեռեալ կ'ըլլայ, անուանն  
որ չհամաձայնի գործոյն՝ յուր կ'ըլլայ : Ան որ լու  
սաւորող չէ՝ ինչպէս ըսուի լոյս : Աւրեմն արժան  
է իրաւարանելով կոչել Պալճեանին գրքին անուն  
ըստ իւր նիւթոյն՝ նոր փաստան կին կրի . Քանզի հին  
ոխակալութեան, նախանձաւորութեան և եկեղե  
ցական վիճաբանութեց կրից բուն բունութենէ  
բռնադատեալ՝ նոր և անհիմն ստեղծագործութի

պատկերներ ալ տպել տուեր է նոյն գրքին մէջը :  
 քանզի երբ որ մեր տիեզերածանօթ և Քրիստոսըն  
 տիր առաքելոց փոխանորդ Ս. Քրիզոստ լուսաւորիչն  
 Տրդատ Թագաւորին հետ Հռովմ խնդակցութե  
 գնացին՝ Ս. Սեղբեւորոս հայրապետին և Կոստան  
 դիանոս Թագաւորին Քրիստոսական սուրբ հաւատ  
 քը ընդունելուն համար : Հոն մէկզմէկ նոր տե  
 սած ժամանակը՝ մեր Սուսաւորիչը կը խոնարհեցը  
 նէ Ս. Սեղբեւորոսի աջը համբուրել կու տայ : Թե  
 պէտ տսիկա բան մը չէ, թող մեր աշխարհաճա  
 նօթ Ս. Սուսաւորիչը Քրիստոսի խոնարհութեան  
 պատկերը ունենայ, բայց մէջը հայոզ ազգասի  
 բին մասց աչաց առջևը՝ յօրինողին հին նախանձու  
 և ատելութեան կրից պատկերները սրբոց պատ  
 կերներէն առաջ կ'երևնայ, որուն անհիմն ըլլալը  
 ամենուն յայտնիէ : Եւ այն որ հիմնաւորեալ ըս  
 տոյգ է մեր Ագաթանգեղոսի մէջը, որ է բուն ժա  
 մանակակից սուրբ Սուսաւորչին և Տրդատ Թա  
 գաւորին և ատենագոյն նոցին, նախանձաւորու  
 թեան սիրտը չտարեր է որ զիսկն նկարագրէ, գո  
 նէ հոս իրաւաբանութիւն մը ընելով՝ յայտնի ա  
 նիրաւաբան չդատէր ճշմարտասիրաց առջևը : քան  
 զի Ագաթանգեղոս կ'ըսէ : Երբ որ մեր Ս. Քրիզոս  
 Սուսաւորիչ պատարագ կը մատուցանէր Հռով  
 մայ եկեղեցիին մէջը, յերկնից անձառելի լոյս մը  
 իջաւ Ս. Սեղանին վրայ, աղեղնաձև եօթը կրկին  
 կամար կապեց վրան, և արփիահրաշ փայլմամբ  
 լուսաւորեցան իր գէմքն որպէս զգէմս Քրիստո  
 սի ՚ի Թափօր, ուր Ս. Կոստանդիանոս ահիւ մե  
 ծաւ եկաւ, կ'ըսէ, Ս. Սուսաւորչին առ  
 ջևը ծունկի վրայ ինկած համբուրեց զբարձս, և  
 ապա համարձակեալ համբուրեաց զաջն և զխաչն,  
 և ապա զգէմս նորին իբրև ՚ի Քրիստոս մերձե  
 նալով, և այլն :

Աս ստոյգ իրաւաբանութիւնը ծանր գալով

իրենց հիմնական սրտին, զանց ընելով սնոր ներս  
հակը անիրաւարաներ է, և երկու հարշալի սրու  
բոց քրիստոսաբարբոք սիրով վառուած սիրտե  
րուն՝ իր սիրտը նմանցոնելուն տեղը, անոնց սիր  
տը իր կողմնասէր սրտին կը նմանցընէ: Ահա քեզի  
նոր փաստան կին կէջ, ահա քեզի խռովութեան և  
աղգատեցութեան նիւթ. թող բռեն իր համա  
խոհները թէ՛ կեցցէ՛ «Քրիստոս», այսինչ վարդապետը  
տասնի գիրք մը հաներ է Հայոց դէմ. այսինքն՝  
լեռը ահագին երկամբ ծներ է. . . այն, գիրք  
բայց ոչ աստուածահաճոյ, այլ մարդահաճոյ: Սակայն թող չգիտնան թէ՛ Հայոց աղգը ասանկ բա  
ներով կը խաբուի, կամ ճշմարտութի՛ն որսացուի,  
այլ մանաւանդ՝ առաւել կը հաստատուի իրեն  
բուն ճշմարտահիմն եկեղեցւոյն վայ. և քանի որ  
տասնի արաքուստ թշնամեաց արշաւանքը կը տեւ  
նայ ու կը լսէ, առաւել կ'ըզգու շանայ ու կ'ըզգաս  
տանայ իւր հոգևոր քաղաքները սւ ամբոցները ա  
մուր և հաստատ սրահելու, մանաւանդ ընտանի  
թշնամեաց դէմ: Վանդի քաջ՛ի մտի ունին Հե  
րոկղիտաս իմաստունին օրինապահութեան վրայօք  
տուած խրատը, որ կ'ըսէ. «Պարտ է ժողովրդեան  
նովին եռանդեամբ մարտնչիլ ՚ի պահպանութի՛ն օրի  
նաց, որով մարտնչին ՚ի պատասպարուի պարսպաց»  
Առաւորեալ ենք, կ'ըսեն, ճշմարտութեան լու  
սով, ու անիրաււութեամբ կը մխեն զիրենք ՚ի կող  
և ՚ի կռիւ. զբանս սուրբ Աւետարանին բանադա  
տելով ու կրկնելով՝ յօդնութիւն և ՚ինպասս կը  
կոչեն իրենց անձնապարծ խռովոյոյ՛ղ դիտաւորու  
թեան, որոնցմով որպէս թէ քրիստոսական հաւա  
տոյ մէմը նոր կը սորվեցնեն, և Պետրոսը աշակեր  
տաց առաջինն ըլլալը նոր կը հրաշաբանեն. բայց  
մենք՝ ՚ի հովաւապետէն Վրիտասէ կարդեալ հովու  
ներուն մէկնալ Պետրոս ըլլալը քաջ գիտենք, այլ  
Հռովմ երթալը, Հռովմայ մէջ ակթոռ հաստա

տեղը, սուրբ գիրքերը չվկայելուն համար, չհաւատալնու վրայ հաստատ ենք: Այն որ սուրբ գիրքերը չեն վկայեր՝ սուտ է ըսելնիս կիրաւարանենք, և ամենեին կոյր խղճահարութիւն մ' ալ չենք ըներ ասանկ բաներու վրայ: Արովհետեւ հաւատոյ մասն չէ, հաւատոցելոց առաջին դաւանողն պէտք չէ, այլ առաջին դաւանանքը պէտք է, առաջին դաւանող իրեն համար դաւանեց, իր հարադատութիւնը յայանելով, և իր դաւանութեան երանութիւնը, ինքը իրեն համար առաւ, ուրիշներուն չստար, և մանաւանդ թէ՛ սուրբ Պետրոս զինքը աշխարհի պաշտել տալու համար չդաւանեց, այլ զդաւանելին զորդին Աստուծոյ դաւանեց, որն որ յոյժ կանխագոյն ՚ի բազմոց ամենաօր շողւոյն Աստուծոյ աղղեցութիւն դաւանուած էր, և Ս. Պետրոսն ալ լսած էր զոր ՚ի սկզբանէ անտի յամենայն ատեղերս կը դաւանուի ու կը պաշտուի որդի շոր Աստուծոյ կենդանուոյ ըլլալը:

Յոյժ կանխագոյն դաւանուած էր, ըսի, այն, և սուրբ Պետրոս ամենէն վերջը դաւանեց: Քանզի Քրիստոսի՝ որդի Աստուծոյ ըլլալուն և յերկնից իջնալուն և աշխարհի փրկիչ ըլլալուն դաւանութիւնը՝ նախ մ'արգարէք դաւանեցին. «Ահա կոյս յղացի և ծնցի, և կոչեցեն զանուն նորա Ամանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած, . . . Չայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն և ուղիղ արարէք զշաւիղս նորա, և այլն »:

Արկրորդ՝ հրեշտակապետն դաւանեաց յանդիման կուսին որդոյն Աստուծոյ յերկնից իջնալը. «Մի երկնչիր, Սարիամ, զի գտեր զշնորհս Աստուծոյ, և ահա յղաւջիր և ծնցիս որդի, և կոչեցեն զանուն նորա Յիսուս, և նա եղիցի մեծ և որդի Տարձրելոյն կոչեցի, . . . Քանզի որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սուրբ է, և որդի Աստուծոյ

կոչեացի » : Այնպէս ևս դաւանեաց հրեշտակա-  
 պետն և Յովսէփայ աստուածահօրն : Արքայ-  
 նա ինքն դաւանելոյն մայրն Վարիամ հաւատա-  
 շով դաւանեաց . « Ազնի ինձ ըստ բանի ըսւմ » :  
 Չարքայ՝ դաւանեաց Յովհաննէս Վերաջի Ազնի-  
 սարէթ մայրը . Արքայ Վարիամ յղացեալ էր 'ի  
 Հոգւոյն սրբոյ , գնաց առ Ազնիսարէթ , որ և  
 տեսնալուն պէս՝ իմացաւ Հոգւովսրբով . ուստի  
 բարձր ձայնով մը ըսաւ Վարիամայ . « Օրհնեալ  
 ես դու 'ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայ-  
 նի ըս , և ուստի է ինձ այս , զի եկեացէ մայր  
 Տեառն իմոյ առ իս » :

Հինգերորդ՝ դաւանեցին ճննդեան գիշեր Աս-  
 տուածառար հրեշտակները , որք և ասացին հա-  
 միւններուն . « Մի՛ երկնչիք , զի ճնաւ ձեզ այսօր  
 փրկիչ , որ է օծեալ Տեառն 'ի բարաբի 'Բաւթի » .  
 և ապա երգեցին . « Փառք 'ի բարձունս Աստու-  
 ծոյ և յերկիր խաղաղութիւն » , և այլն :

Վեցերորդ՝ դաւանեցին հովիւք Մէթղէհէմի ,  
 որոնք երբոր հրեշտակաց աղգարարութիւն գնացին  
 'ի Մէթղէհէմ . . և ծանեան վասն բանին , որ ա-  
 սացաւ նոցա 'ի հրեշտակաց վասն Յիսուսի , սրառ-  
 մեցին ամենեցուն , որոնք որ հովիւներէն լսեցին  
 դարմացան նորածին թագաւորին վրայ :

Եօթներորդ՝ դաւանեցին մոզք եկեալք յարե-  
 եից , գուշակութեամբ աստուածացոյց աստեղցն :  
 « Ալ իբրև մտին 'ի սուենն , տեսին զմանուկն . . .  
 և անկեալ երկիրպագանէին նմա , և բացեալ  
 զգանձս իւրեանց մատուցին նմա սակի , կնդրուի  
 և զմուռս » :

Աւթերորդ՝ դաւանեաց Միսէօն Օերունին , որ  
 'ի Հոգւոյն սրբոյ հրաման առած էր չմեռնիլ ,  
 մինչև տեսանել զօծեալ Տեառն , որ է Յիսուս  
 օրդի Հօր Աստուծոյ . զորն որ ընկալաւ իւր գիրկը  
 հաւատաց զինքը հեթանոսաց լոյս և Իսրայէլի

փառք ըլլայր , ապա խնդրեց իւր մահը լսելով .  
 “Արդ արձակեա՛ն դժառայս քս , Տէր , զի տեսին  
 աչք իմ զփրկութիւն քս :

Կեներորդ՝ դաւանեաց Յովհաննէս Վերտիւ . “Ա-  
 հա՛ գառն Աստուծոյ , որ բառնայ զմեզս աշխարհի ,” :

Տասներորդ՝ Հայր ՚ի վերաւս եցոյց աշխարհի  
 զդաւանելի որդին իւր վկայելով . “Ինչ ես որդի  
 իմ սիրելի , ընդ քեզ հաճեցոյ ” :

Մետասաներորդ՝ Հոգին սուրբ ազաւանակերպ  
 իջեալ ՚ի վերայ նորա՝ յայտնեաց զդաւանելի որ-  
 դին հայրառաք :

Երկրորդսաներորդ՝ դաւանեաց Նաթանայէլ , որ է  
 Բարթուղիմէոս առաքեալը . “Ինչքի , դու ես  
 որդի Աստուծոյ , դու ես թագաւորն Իսրայէլի ,” :

Երերրորդսաներորդ՝ դաւանեաց ՚ի ճնէ կոյրն . .  
 և այլքն :

Չորերորդսաներորդ՝ դաւանեաց և մեր Ա. Բ.  
 դար թագաւորն , դուցէ յառաջ քան զսուրբն  
 Պետրոս , և այն միայն լսելով խոստովանեաց իր  
 նամակին մէջը . “Ինչ կամ Աստուած ես , և կամ  
 որդի Աստուծոյ յերկնից իջեալ ,” սրուն երանու-  
 թիւնը գերազանցեց քան զԹովմային և քան ըզ-  
 Պետրոսին : Քանզի ըսաւ Հիսուս Թովմային .  
 “Ինչ տեսեր և հաւատացեր , բայց երանի՛ այ-  
 նոցիկ , որոց ոչ իցէ տեսեալ և հաւատացեն ,” :

Յետ ամենից դաւանեաց և Ս. Պետրոս առա-  
 քեալն ասելով . “Ինչ ես որդի Աստուծոյ կենդա-  
 նոյ ,” յետ Պետրոսի ապա և պահապան հարիւ-  
 րապետն անգամ երգմամբ դաւանեց զինքը խաչին  
 վրայ եղած ժամանակը “Արդարեւ որդի Աստուծոյ  
 էր սա ,” ըսելով :

Առնք ամենք բանիւ դաւանեցին և գործովայ  
 իրենց դաւանած հաւատքը կենդանացուցին որով  
 երանութեան պտակը առին իրենց հաւատոյ փո-

խարէն , և աւանդ թողոյցին մեզի . որ մեք ալ  
 դորձով ճշմարտեմք 'ի մեզ դաւանելոյն սուրբ  
 կամքը . այս թէ ոչ 'անգործ դաւանութիւնք ինչ  
 օգուտ ունի . չէ որ անանկերուն համար է ըսա-  
 ծը . " Օհ կոչէք զիս Տէր Տէր , և զոր ասեմս ոչ  
 առնէք " : ապա թէ ոչ ' սատանայքն ալ դաւա-  
 նեցին զՎրիստոսը հօր Նստուծոյ որդի ըլլալը ը-  
 սելով . " Օհ կայ մեր և ըս Յիսուս որդի Նս-  
 տուծոյ եկիր տարածամ տանջել զմեզ " որ լե-  
 գուն և սիրտը կրնայ համարձակել ասելու թէ  
 այս դաւանութիւնները սուտ են , կամ նոյն զօ-  
 րութիւնք չունին . կամ թէ Պետրոսին դաւանու-  
 թիւնք ասնոցմէ զօրաւոր կամ հաճելի գտնուե-  
 ցաւ Յիսուսի Վրիստոսի , կամ թէ այնքան բը-  
 ժըշկութիւնները որ ըրաւ . զինքը որդի Նստուծոյ  
 դաւանելով ու որդի Նստուծոյ հաւատալով չէին :

Նյս բոլոր աշխարհածանօթ և աշխարհահրաշ-  
 դաւանութիւններէն չենք կրնար համարձակել ըսելու  
 թէ Պետրոս առաքեալը անտեղեակ և անձանօթ էր  
 բնութիւն : Վանդի ինքն ասէ . Յեկեալ այնպիսի բար-  
 բառոյ մեծ վայելչուէ փառաց անտի , եթէ ' դա-  
 է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ , և զայս բար-  
 բառ մեք իսկ լուար եկեալ յերկնից , սբ ընդ նմա  
 իսկ էար 'ի որ լերինն : (Պետր . բ . ա . 17) : Աւրեմն  
 միայն Պետրոս սկիզբն չեղաւ Յիսուսի Վրիստոսի  
 Հօր Նստուծոյ որդի ըլլալուն դաւանօղը : Աչ այլա-  
 և նա ինքն Պետրոս կը խոստովանի մարգարէից գիա-  
 նալը . " Այն ամենայն մարգարէք վկայեն . թողուի  
 մեզոց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատա-  
 ցելոց 'ի նա (Վրժ . Ժ 43) : Օարթուցից 'ի յիշատակ  
 զհաստատուն միտս ձեր ' յիշել զյառաջագոյն ասա-  
 ցեալ սրատգամս 'ի սբց մարգարէից և յառաքելոց  
 ձերոց (բ Պետր . գ 12) :

Ապա որ յիմարը կրնայ վստահիլ ըսելու . եթէ  
 Պետրոսի դաւանութիւնք ըլլար ' Յիսուսի Վրիստոսի

որովհետև ընդ սրբ պիտի չդաւանուէր կամ ան առա-  
 ջի դաւանողները սուտ պիտ' ելլէին, կամ թէ Պետ-  
 րոս առաքեալը ըրար՝ Քրիստոս չի պիտի կրնար  
 իւր աստուածութիւնը յայտնել աշխարհի : Ա-  
 բովհետեւ հռովմէականաց մեծասրտութեամբ, և  
 միայն Պետրոսի և իրեն յարմարեալ փոխանորդ  
 պապերովք կ'իրաւարանեն երկնից արքայութեան  
 արժանանալ : Կակ մեր Հայոց շատ մը երեւելի  
 սրբազան փարդապետներէն Պետրոս առաքեալին  
 առաջնութեան վրայ վկայութիւններ տալով՝ ի-  
 իրենց կամքը պաշտել տալ կ'ուզեն : Բայց սուրբ  
 Պետրոսը առաքելոց մէջ առաջին համարուիլը, և  
 Քրիստոսի առաջին հետեւող ըրարը իրենք ձեր տե-  
 ղէն ուտեալ են նէ՛ Հայոց քրիստոսադաւան ազգը  
 իրենց մէ առաջ ուտեալ էր : Կոն առաքելապետ-  
 թիւն չսահմանուելուն համար, առաքելապետա-  
 սահման չըրարուն իրաւարան է Հայոց ազգը : Կը  
 դիւրացնեն Հռովմայ եկեղեցւոյն հնազանդիլ  
 մեր փարդապետաց և հայրապետաց վկայութեամբը,  
 բայց զարմանք այն է որ նչ իրենց օրովք և նչ իրենց  
 յոջորդաց դեռ հիմա՛ Հայոց քրիստոսադաւան,  
 ուղղափառ, և անկարօտ եկեղեցին իր անխախ-  
 տութիւնը և անխախտութիւնը բնաւին չկորսնցուց,  
 ընդ իշխանութեամբ չինկաւ : Կը ներգործէ իր դո-  
 րութիւնները Հոգւոյն սրբոյ շնորհօք, և ուրիշին  
 շնորհացը կամ միջնորդութեանց ամենեին կարօտ  
 չեղաւ : կարօտ չէ և կարօտ ալ ըրարու չէ : Բայց  
 իրենք թուղթի վրայ ամբողջ Պետրոսի շինած աղ-  
 դին մէջը կը տարածեն : դէշ բան չէ : Թող ան ալ  
 պատճառ ըլլայ զսօզ միամիտ ժողովուրդը արթն-  
 ցնելու Պետրոս առաքեալին Հռովմ շերթալուէ  
 ստութիւնը՝ թէ և իրենք Սուրբ գիրքերէ դուրս  
 վկայութեամբ կը պահեն թէ գացեր է ըստ հին  
 սրբապետութեան ասածին : « Դիոնէսիոս բանաւորն  
 կ'ուզէ աստուածանալ թող աստուածանայ » :

1005  
 19766-59  
 65-99161



Այս թէ ոչ այսպէս երևելի առաքելի մը, այս-  
 չափ արտօնութիւն ունեցող հովուապետի մը, ար-  
 քայութեան բանալեաց տիրոջ մը, առաքելաց և ա-  
 ռաքելայաջորդ երիցանց իշխողի մը տեղը, գահը  
 պէտք էր որ սուրբ Արուսաղէմ՝ Աստուծոյ քա-  
 ղաքէն առաւել հռչակաւոր վանք մը կամ քա-  
 ղաք մը ըլլար, կամ նոյն ինքն Աստու Աստուածը  
 իւր Աստուածայայտնութեան սուրբ Արուսաղէմ  
 քաղաքին մէջը հաստատէր Պետրոսին նախագահու-  
 թեան տեղը, որ առաւել խորհրդաւոր կ'ըլլար :  
 Ասոնց և ոչ մէկը կայ : այլ միայն ամենուն հաւա-  
 սարապէս ըսաւ : Բնացէք յաշխարհ ամենայն, և  
 այն : Պետրոս ալ ան Բնացէքին մէջն է : Պետրոս,  
 դու հռովմ գնա, ըսաւ ու չյատկացուց : Աւրե-  
 մըն մինչև հիմա սուրբ Վիրքերէն յայտնի չըլլալէն  
 ետև՝ ալ անոր ընդհանուր իշխանութեանց վրայ  
 ինչ ստուգութիւն կրնայ ըլլալ : Արտաքին շնորհ  
 վկայութիւններով այսպէս երևելի իշխանութի մը  
 չի հաստատուիր, ինչպէս որ դեռ անհաստատ է :  
 Բսենք թէ Պետրոս առաքեալ իր իշխանութեան  
 վրայ խոնարհութիւն ցուցուցած է, մեծասիրու-  
 թիւն ու մեծասրտութի չըրեր է, իրենմով պար-  
 ծողներուն, այսինքն՝ պապերուն պէս : քայց մե-  
 տասանքն պէտք չէին որ՝ երբեմն երբեմն հպե-  
 ւորական կառավարութեան կամ հաւատոյ վրա-  
 յօր բան հարցունէին կամ գրով կամ բանիւ,  
 և կամ անձամբ ներկայանային Պետրոսին : ասկից  
 կ'երևի թէ՛ բոլոր առաքեալք անկախ էին իրենց  
 հոգևոր իշխանութեան մէջը, իրարու առաջնոր-  
 դելու և իրարու շնորհացը կարօտ չէին : երկուս-  
 սանքն ալ երկուսասան գլուխ էին իրենց վիճակեալ  
 ժողովրդոց վրայ : մէջերնին իմ և քս չիկար, մե-  
 ծութեան ու պատուոյ վէճ ծագած չէր : ինչու որ  
 ան ժամանակի հոգևորականք տշխար, ային հեշ-  
 տութեանց, երջանիկ և ազատ կեանք վարելու

համար, մէկ եկեղեցիէ ապաստաբերիլ, մէկալ եկեղեցիին հնազանդիլ, տկար թագաւորաց սահմաններէն անցնիլ, հզօր թագաւորաց սահմանները քաշուիլ չիկար. և անոնց հաճոյանալու համար՝ ոմանց հաւատքը դռնել, և ոմանցը պարսաւել չիկար. միայն Ստոյիկեանք և Նախիկիւրեանք, փիլիսոփայք, և իրենց նման դեռ Վատուածութեան անձանօթ տարրապաշտները հաւատոյ դէմ կը զինէին, և առաքելոց կը ներհակէին:

Բայց առաքելալք և առաքելայաջորդք ետեւէին անօրինաց մէջը Քրիստոնէական սուրբ հաւատքը քարոզելու, անհաւատները և հեթանոսները՝ ի հաւատս դարձընելու. անատեն՝ մինակ Վերտարնէ Քրիստոսի փոխանորդ քարոզող չիկար, արքայութեան բանալիները մինակ տնօր քոյնէ՝ պընդօղ և խաբօղ չիկար, և Վերտոսէն ալ կողոպտող պապեր չիկային. թէ որ անոնց հնազանդիք, փրկութիւն չէք գտնար Քրիստոսընդդէմ քարոզութիւններ չիկային. Վանորոյ և մեր սրբազան նախնի հայրապետք, ի պատիւ սուրբ առաքելոցն Վերտոսի և ի փառս միահեծան յաղթօղ թագաւորութեան նոցին, երգեր յօրինեալ են, ինչպէս իրենց հոգեշունչ շնորհօք, ոչ միայն Վերտոսի մահանուանը վրայ, այլ և իւրաքանչիւր առաքելոց վարուց և գործոց յարմար հրաշայի երգեր յօրինեալ են. զորոնք սուրբ եկեղեցին իրենց տօնին երգելով՝ բարեխօս կը բռնէ միշտ. ինչպէս Արդւոց որսոման համար ալ կ'երգէ. « Արդիքն որսոման Յակոբ և Յօհան, որք հնչեցին ՚ի վերսուտ Բանն մարմին եղեալ », որք արդարեւ կը գերադանցեն քան զամենայն սրբոց երգս նաքան զՎերտոսին և այլն: Բանդի ան ժամանակի Քրիստոսաքարոզ ճշմարիտ եղբայրսիրութիւնն այնպէս սրտուղներ կը բուօցունէր սուրբ եկեղեցւոյն, մէկզմէկ Քրիստոսի նուիրելով և Քրիստոսա

Նման գործեր գործելով՝ անմահ կ'արձանացնէին  
 և ոչ հիմակուան պէս դիտարա կ'ատէին, և ի  
 բարու վրայ աստուածանայով՝ գծոխոց գուռներ  
 կը բանային :

Նպա թէ ոչ՝ եթէ Յիսուս զՎերոսը նախա-  
 դահ կարգած էր համաշնորհ եղբայր առաքելոց  
 վրայ, պէտք էր որ նոյն նախադահու թիւնն  
 յաջորդաբար միայն առաքելոց վրայ իջնար մինչև  
 ամենուն վախճանը, կամ Յիսուսի պատու իրանաւ  
 և կամ Վերոսի ընտրողութեամբ. եթէ այնպէս  
 ըլլար՝ պէտք էր որ սուրբ Վերոսի նահատակուե-  
 լէն զկնի՝ Յիսուսի սիրելի աշակերտ սուրբ Յով-  
 հաննէսը կամ առաքելոց մէկը յաջորդէին իրեն,  
 որոնք որ գեռ կենդանի էին : Աւարդարև արժանն  
 ալ աս էր. բայց Վինոս կամ Օնոս անունով մէ-  
 կը նստաւ, կ'ըսեն, սուրբ Վերոս առաքելակին տե-  
 դը պատ, և այն սուրբ Վորոս առաքելակին աշա-  
 կերաներէն, և ոչ սուրբ Վերոսի. տէս բ. Արմի.  
 դ. 22 : ապա ասանկ յայտնի հաւանական պարա-  
 գաներէն կը հետևի թէ՛ սուրբ Վերոս Վրիստո-  
 սէն առաքելապետ սահմանուած չէ :

Այն, մեր սրբազան վարդապետները, ան խա-  
 ղաղութեան ժամանակները, համարեալ թէ՛ ա-  
 լանդուութեամբ կամ արտաքոյ համբաւներէ առ-  
 նելով՝ միամտաբար վկայեր են սուրբ Վերոսի  
 Հռովմ երթալուն վրայ նէ, աս աւուր օրս սուտ  
 և սխալ ըլլալուն՝ իրենց պակասութիւն մը չէ,  
 և ըստ հաւատոյ մասին, սխալմունքը չեն : Ա-  
 ըրինակի աղագու ինչպէս ասկից քիչ մը ժամանակ  
 առաջ կը պնդէին թէ՛ Արեգակն կը դառնայ աշ-  
 խարհագուռնդին վրայ, Յեսուին վկայութիւնն ալ  
 բերելով, բայց արդի արուեստագէտք քաջ վե-  
 րահասու ըլլալով՝ ստուգեցին թէ՛ արեգակն ա-  
 մենևին անշարժ է, երկրագունտը կը դառնայ ա-  
 րեգակին դէմ, և զատոյզն հրատաքակեցին աշ-

խարհի • Ասով ոչ արեգակին մեղանշում մը եղաւ  
կամ փոքրիւթիւն մը, և ոչ երկրագունդին, և  
անանկ հաւատացողներուն ալ յանցանք մը չեղաւ •  
Նոյնպէս և ոչ մեր սրբազան Հայց յանցանք մը  
կամ հաւատոյ դէմ սխալմուք մը ըրած կը համար-  
ուի պարզ մտօք յանուն Վերստի շինեալ եկե-  
ղեցիին վրայ, զՎերստն փոխանակ եկեղեցւոյն  
դիմառնարար առնելով՝ երգեր յօրինեալ են ըստ  
արժանւոյն •

Ղուսաւորեալ չեն համարեր Հայոց տղաք, բայց  
նա քաջ կը ճանաչէ խաւարային վարդապետու-  
թիւնները, կը ճանաչէ ան բերանները, որ սուտ  
թարգմանութիւն կ'ընեն ճշմարտաւէր խղճին, կը  
ճանաչէ իրեն ընտանի թշնամեաց բերանօք օր-  
հնութիւն, և սրտիւք անէծք կ'արդայնին • քանզի  
արտաքուստ կը տեսնանք՝ թէ բանիւ և թէ գրով  
խրատաւասական բողոքներ, յորդորանաց ձայներ,  
ազգասիրութեան և հայրենասիրութեան եռանդ-  
ներ բորբոքել տալը, անանկ որ՝ կարծես թէ եր-  
կնի և երկրի բարութեանց հասնելու ճանապարհ-  
ներ ու դուռներ կը բանան առջևդ, բայց մէկ  
մ'ալ կը նայիս որ՝ մտի հրոյն լուսաւորութեամբ  
լուսաւորեալներ իրենց հին սխերը, հին ազգա-  
տեցութիւններ (որոնց փայծը բիւրիցս անգամ ա-  
ռած է Հայոց ազգը) • զորոնք նոր նորոգելով  
առջևդ կը հանեն • Այն է՝ Վերստու տաւքեալին  
երկրորդ Քրիստոսուի, իրեն յաջորդ պապերուն  
արքայութեան դրած անսխորձ դռնապան ըլլալին •  
անոնց անսխորձ բանալեաց շառաչման ձայներ կը  
հանեն առջևդ, կը գլորեն նաև առջևդ ահագին  
վէմ մը • Աս ի՛նչ է • Վերստս ինքն, ու ձեռքն ալ,  
նոր գերազանց լուսով լուսաւորել հայր Պալճեանք  
սոխակի վանդակ մը սուլած, աս ի՛նչ է • կաթու-  
ղիկէ եկեղեցին, և եկեղեցւոյ տէրը •

Եւ ապա առանց Արարեծոյ հաճութե. Աստուա-

կերպ իշխանութե՛ն ձայներով և ինքնահաւան իրաւ  
 ւաքանութիւններով կը վարդապետեն. եթէ վերո-  
 գրեալ իշխանութեանց իշխանապետ պապը չճա-  
 նաչես, և անոր չհնազանդիս՝ անդարձ վճռով մը  
 կը վճռեն, թէ արքայութիւն չես կրնար ելլալ.  
 և ան եկեղեցին, որ վերի միահեծան իշխանութե՛ն  
 չհնազանդի՝ Մատուածածնի տունին պէս Հռովմի  
 հողին մէջը չթռչի չգետեղուի՝ հերձուած է, մնա-  
 րեալ է, հերետիկոս է, չարափոս է. անհա՛ բեղ  
 իրաւաքանութի մը, որուն մէջը մինակ իրաւը փո-  
 խուած է :

Այս աս իաւարացին և անդնդային ձայները  
 ուր տեղէ կը հանես, լուսաւորեալ դար. զինչ  
 միաքանութիւն է լուսոյ ընդ իաւարի, ընդդէմ  
 միոյն հաւատոյ մերոյ. Յիսուսի Քրիստոսի Հօր  
 Մատուծոյ Արդւոյն. որուն համբուրելի և պաշ-  
 տելի և երկրպագելի բերանն ըսաւ. « Աւր իցեն  
 ժողովեալ երկուց և երից յանուն իմ՝ (որ կ'իմա-  
 ցուի յիս հաւատալով) անդ եմ և ես 'ի մէջնոցա ու  
 Նւ ան իշխանութիւնները, որ կը ջանան իւրացուցանել  
 'ի փառս անձին իւրեանց, մենք կը հաւատանք  
 Քրիստոսի ըսած Աւրին մէջը, և ոչ ուրիշանդ .

Արանի կու տայ հաւատացելոց ջերմեւանդու-  
 թեանը, հայր Պալճեանը, որոնք որ քրիստոսեա-  
 կան հաւատքին համար կը թողուին, կ'ըսէ, ի-  
 րենց հեթանոս ճնողքը, բարեկամքը, սիրական-  
 քը, տունը և հայրենիքը, կ'երթային դէտ հա-  
 ւատոյ, ինչպէս որ ինքը Հայր Պալճեան կատարեց.  
 քայց անոնք հեթանոսութենէ յաստուածգիտու-  
 թիւն կը դառնային, 'ի սէր աստուածգիտութեան  
 կը լքէին իրենց հեթանոս ճնողքը. իսկ ինքը ին-  
 չու համար իրեն ճնող եկեղեցին փոխեց, և հի-  
 մա արատ ալ կը դնէ, և զգանգ հայրենեաց քա-  
 կել կը ջանայ, չի դիտեր հայրենեաց ցանգը քա-  
 կողին պատիժը. « Ար քակէ զգանգ հայրենի՝ հար-

ցէ դնա օձ անապատի » :

Կաւեռնէ նաև դարուս լուսաւորութիւնը , ըսե-  
լով , որուն լուսաւորութեամբ քիչ ժամանակի  
մեջ հանձարք ծաղկեցան , գիտութիւնք փայլե-  
ցան , ծովուն անաստու-թիւնք , երկրի խորու-  
թիւնք , մետաղաց բնութիւնք և երևումը , ան-  
ծանօթ ճանապարհորդութիւնք . ասոնք ամէնք դա-  
րուս լուսաւորութե փորձը առին ու յաղթեցան հան-  
ձարներէն . Հերակլիտն արձանը անգամ , որ սահ-  
ման էր նաւերուն . հիմա օն անդր անցան . թե թե  
չոգիք ծանրաբեռ նաւերը թեւաւորեցին , կ'ըսէ ,  
բայց աս ամէն շնորհաց վերերևումն միայն իրենց  
զգացմանց կու տայ , իրենց մտաց սահմանը միայն  
հասու ըլլալ կը ցուցունէ : Այլ ապա խօսքը Հա-  
յոց ազգին վրայ դարձրնելով , ինչպէս որ իր բուն  
մտաց նպատակն ալ ան է , ան ամէն շնորհ բներէն  
զուրկ կը հանէ , որպէս թէ կ'ափսոսայ , կը մեղ-  
քընայ , և մանաւանդ հաւատքի լուսաւորութե  
ճշմարտափութեան մասին՝ դեռ խաւարի մէջ  
կը դատէ իր նոր իրաւաբանութեամբը , Կուզենք ,  
կ'ըսէ , մենք ալ աս ճշմարտութեան ճրագը վա-  
ռել , որ մեր Հայկեան սան լուսաւորութի մը տայ  
և մառախուղը փարատէ . . . ան մառախուղը , որ  
շատերուն միտքը պատած է՝ սուրբ Աետրոսին ա-  
թուր և կամ քահանայապետական գլխաւորու-  
թեան ու իրաւաբանութեան նկատմամբ :

Այն , ըստ իրենց մտաց նպատակի ճրագի լուսին՝  
որ է միայն Հռովմի եկեղեցին , փրկութեան եկե-  
ղեցի հաւատայ կամ ընդունել տալ . բայց մենք  
ան լուսով լուսաւորիլ ամենեւին կարօտութիւն  
չունինք . քանզի մենք Վուսաւորչեանքս՝ մեր ա-  
նազատ և քրիստոսափայլ ճրագի ճշմարտութեան՝  
հաւատքի լուսովը անոնց նոր իրաւաբանութեամբ  
կարծեցեալ մառախուղէն և խաւարէն դուրս չել-  
լալու՝ անփոփոխելի և անայլալի և անանցանէ .

ի կենդանիս ունիցի , որուն ճակատը Քրիստոսական  
կամայ և հաճութեամբ անմահութեան արձանա  
գիրք ասանկ արձանագրեալ է .

Հասարակ ՚ի Տի Ապոստոլ ճայր անկախալ յարարին եր  
կնի և երկն երկնայ և աներևոտակից : Հասարակ և ՚ի Տի  
Տեր (Յեսու Քրիստոս յՈրիս Ապոստոլ , ծննդն յԱպոս  
տոլ ճորի Տոմիս , այսինքն յերկնիս ճայր , և այլն : Հա  
սարակ և ՚ի ճորիս ասորի յանկախ և ՚ի կայարեալ . որ խո  
տեցա յորին և ՚ի ճարգարիս և յաւերարանս , և այլն : Հա  
սարակ և ՚ի Տի Տոյն ընդկանքակն և ասարեղական եկե  
ղոցի ՚ի Տի ճիրարակն , յայտնարոտակն , ՚ի քառակն և  
՚ի յարակն Տղայ , և այլն : Հայրաց և ճարճաց յարայ  
ակն երկնայ և ՚ի կեանս յասարեղական :

Մտ կենդանին , այսինքն՝ հանդանակին մէջն ոչ  
Պետրոս ասարեալ կայ , ոչ Պետրոսի ակժող , ոչ  
Պետրոսի բանակներ կան , և ոչ Պետրոսի դաւա  
նութեան զեմք , մի թէ կանոնք ըսել թէ՛ Քրիս  
տոս սխալեր է կամ հոգեգումար սրբազան ժողովք  
սխալեր են . . . . բայց կանոնք համարձակիլ  
ըսելու թէ՛ հանդանակը ունեցող եկեղեցին դէմ  
և նեհակ կեցողք՝ յայտնապէս սխալած են և կը  
սխալին , և համբաւեալ իրաւարանութիւնին  
բոյարմին ստարանու թի է առաջի ճշմարտութեան  
մատենին սուրբ Աւետարանին . որուն տիրոջը կը  
ձգենք ընդ դէմ ինքնի ապաշտոյց դասը ինքը տեսնել ,  
և ճշմարիտ իրաւարանութեամբ իւրով դատել :  
Գուցէ չմոռցեր է հայր Պալճեանը Հայոց ազգին  
ըստ հաւատոյ մասին երկչոտ բնաւորութիւնը ,  
քանզի լայն և արձակ ճանապարհներէն երթալ  
կը վախճան միշտ , և կորստեան ճանապարհներէն  
միշտ կը դդուշանան : Բայց հաւատքի լուսաւորու  
թեան և գիտութեանց մասին՝ Հայոց ազգը՛ իւր  
նուտ անտի լուսաւորեալ է . թող սրբեն իրենց  
նախանձու աչքը և հիմա շարհօք սուրբ Հոգւոյն  
առաւել և սիր եկեղեցին փափաքը կը լեցնեն ,

առենեկին ոչ խաւար , ոչ հարածմուկք , ոչ արիւն  
 կարաց երբէք՝ ի լուսաւորութենէ հաւատոյ զինքը  
 մեկնել . որպէս և իրեն իսկ հայր Պայճեանի ոգիին  
 ծածկեալ թաղուն ճշմարտասէր ոգիները ՚ի ներ-  
 քուստ կը բաղխեն և կը կրճեն զխղճարանին գա-  
 գաթը , թէ՛ Հայոց աղգը բրտամբ , արեամբ , մահ-  
 սւամբ , հարածմամբ , հեղձմամբ , և աղգի աղգի  
 նահատակութեամբ , սովով ծարաւով՝ իր բըխ-  
 տոտահիմն եկեղեցին կանգնեց և խնամեց , և ոչ  
 արեւմտեան աղգաց պէս ազատ իշխանութեամբ  
 և ամենակերպ երջանկութեամբ : Ի՞նչպէս կը  
 թխտեն և հիմակուան աղգիս լուսաւորութիւնը ,  
 չէ՞ որ անոր լուսաւորութեամբ և մեր լուսաշաւիղ  
 նաւապետները քան զ՛երակիւնն արձան՝ աներ-  
 կիւղ ծն անդր անցան . քանզի առաջնորդութիւ  
 սուրբ Հոգւոյն՝ անցանք քան զսահմանեալ հա-  
 ւատոյ արձանն Հռովմի . ինչպէս հաւատեալ գի-  
 տէինք , փորձիւ ալ քննեցինք , սրոնեցինք զ՛Նեա-  
 րոս առաքեալն ՚ի Հռովմ , և ոչ գտաք զնա անգ  
 և ոչ զհետա շաւղացն անգամ : Բայց և սս բրո-  
 նութեամբ զսուրբն Նեարոս ՚ի Հռովմ տանին չի  
 կարծենք թէ առանց խորհուրդի քան մըն է , այլ  
 խորհրդաւոր . քանզի Բրիտանոսի Տեառն մերոյ  
 խօսքը պիտի կատարուի , որ ըսաւ Նեարոսին հա-  
 մար . « Այլ յորժամ ձերասցիս , ձեռս ՚ի վեր կալ-  
 ցես և այլ բ անցեն քեզ դօտի , և տարցին ուր  
 ոչն կամիցիս » : Որպէս ահա բռնի անել կամին  
 զինքն ՚ի Հռովմ :

Ար պարծենան նաև Յիսուսի Բրիտանոսի Տեառն  
 մերոյ Նեարոսին զրուցած սս խօսքովք . « Այլ դու  
 երբեմն դարձցիս և հաստատեցիս զեղբարսդ » ,  
 և մեկնութիւնն ալ կու տան , որպէս թէ Հռովմ  
 մի պատն , որ իսկ Նեարոսի փոխանորդ կը կարծեն ,  
 երբեմն պիտի դառնայ իր եղբարց , այսինքն՝ ու-  
 թիշ առաքելաշարժող անուղղայ հովուապետները

հաւատոյ վիճին վրայ կրկին պիտի յորդարէ և հաւատաւտէ . թէպէտ ճշմարիտ է , քանզի հաւատքի ճշմարտութիւնն երբեմն զթերահաւատս 'ի հաւատաւտութիւն հաւատոյ պիտի ածէ , նլ որ և իցէ ուրեմն եթէ Պետրոս Հռովմ գացած չէ , և ըզՀռովմը տեսած չէ , հապա ան վիճակիւր Պետրոսը որ կողմէն որ կողմը , կամ որ քաղաքէն յոր քաղաքը կը դարձունեն : Ար թերահաւատք , որ եղբայրանեացը , որ ազգաստեացը , որ գայթակղեցուցիցը , որ հեշտասէրը , կամ որ աշխարհական իմաստութեամբ պարծեցողը , և կամ որ ընդդէմ միամիտ և ջերմեռանդ քրիստոնէից աստուածապետալ արքայութեան դուռը փակողը՝ Քրիստոսի բիւրաւոր ոչխարներ կորսնցընող հովուապետները պիտի շահէ ու հաստատէ :

Հայոց ազգը 'ի բնուտ անտի 'ի հաւատաւ լուսաւորեալ էր , ըսի , այն . ոչ ապաքէն նոյն լուսաւորութեամբ իջանք Հռովմի քրիստոսաւանդ հաւատոյ արդեւանոցներուն մէջը , և որոնեցաք նոյն պէս դնա ինքն զհաւատն 'ի կաճեցա և 'ի շղթայս Հռովմի , և դնա և ս չգտաք անդ , այլ ըստ մեր կանխագոյն վերահասութեան իմացանք որ Քրիստոսի հաւատքը անվեհեր և աներկիւղ ինքնածին իշխանութեամբ ազատընթաց կ'արշաւէ իր անառիկ և աննուաճելի հոյակապ աստուածահիմն պալատներուն , և իր հարազատ պալատականաց մտքրեալ և յարդարեալ սրտին մէջը թագաւորելով երկոտասան ազգաց վրայ միանգամայն զթագաւորն թագաւորաց Յիսուսը իրենց գլուխ ունենալով : Միթէ փոքր արձան անցանք . ընդ այս քաջութիւն լուսաւորութեան ազգիս՝ բոլոր քրիստոնէից ազգերը կեցցէ կը կարդան :

Ապա ասոնք , որ իրենք զիրենք լուսաւորեալ կ'ըրաւարանեն , ինչո՞ւ անանկ յամառեալ են իրենց հին նախապաշարեալ կրից մէջը . « Քժիշկ , բը

Յրչկեան գանձն քո և շէն կարդար առ խօսքը .  
 իրենց ծովացառումն խռովեցուցիչ կրից սանձ մը  
 շէն զարներ , Թագուն խեռութիւննին՝ անսխա  
 կարութեան սրտիւ շէն պարզեր , կ'երկնչին շէ  
 բակիւան արձանէն , այսինքն՝ պապական ինքնա  
 հաւան և հոգարտ սուր Վերստական իշխանութե  
 արձանէն անցնիլ . ինչո՞ւ Թեթե շողիով և ճշմար  
 տութեան սգւով իրենց ատելութեամբ և մախա  
 նօր ծանրաբեռնեալ նաւերը՝ կորստեան անդունդ  
 ներէն շէն հաներ աղատեր : Ճշմարտասիրութիւ  
 նը ընդ կողմնապահութեան շէն բաղդատեր՝ քը  
 բիտոսական ճշմարտութեան մետադները , այսին  
 քն՝ սէր ընդ հաւատոյ շէն շօշափեր , որպէս զի  
 մոլութեան սղինձն և ժանգն մերկանալով՝ առա  
 քինութիւնը փայլին : Այլ զինեալ են միշտ զե  
 կեղեցի ի մերայ եկեղեցւոյ յարուցանել , արատ  
 գնելով եկեղեցին գլխաւորաց , խորհրդոց , ըն  
 Թացից , և հաւատոյ մասանց . պատճառը՝ Վեա  
 րսին երկրորդ քրիստոսութիւնը չդաւանելնիս  
 և Հռովմի եկեղեցին գլուխ եկեղեցւոյ չընդուն  
 նելնիս է :

Քանզի նոյն գրքին մէջը՝ Պալճեան հայր Աղէք  
 սանդր նոր առարեւածեռնադրիչ ըլլալով , զՎեա  
 րսն միւս համապատիւ և համաշնորհ եղբարցմէ  
 քրիստոսամերձ դատելով , որպէս թէ կաթողի  
 կոս կ'ընէ , և միւս եղբարքը Յակոբ նահապետին  
 հարազատ և անհարազատ որդւոց պէս , խորհու  
 թիւն տալով՝ Քրիստոսի և Հոգւոյն շնորհաց հա  
 ռասար ժառանգակից չընէր , մէջերնէն մէկը կ'ընտրէ՝  
 ամենասուրբ կաթողիկոս կ'ընէ , և միւսները՝ ե  
 պիսկոպոս կամ եպիսկոպոսակից , որպէս թէ՛ Քը  
 բիտոսի մտաց պակասութիւնները մինչ աս դա  
 րը իրեն մնացեր է լեցըներու , և մինչև հիմա քը  
 բիտոսական եկեղեցիները անդաստիարակ մնա  
 լով , ինքը իր նոր իրաւաբանութեամբը կը դաս

ախարակէ : Քայց , ախանս , որ մէկ կողմանէ խիստ  
 ապերախտ գտնուեր է : խեղճ Պօղոս առաքելաց ,  
 որ բուն և ճշմարիտ Հոգիով լուսաւորուին է , քոր  
 եղիսկոցս ձեռնադրուելու անգամ արժանի չէ  
 եղեր : Այն , իրաւունք ունիմ աս հեղնութիւն  
 ներք ընելու , իրովեռու միտքան առաւանձանե  
 սից և միտքան հոգեբնկալ առաքելաց մէջ այն  
 քան տարբերութիւն կը ձգէ , որ 'ի հարկէ Պետ  
 րոս առաքելին և իւր նմանիքն ալ ան աստիճա  
 նի իշխանութեան հաղիւ կ'արժանանան : Քանզի  
 եթէ որդին Նստուծոյ , ըստ Պալճեանի նորագիւտ  
 իրաւաբանութեան , զանազանեց զՊետրոս միւս  
 առաքելներէն որ առաքելացեալ և երկնի և երկ  
 թի կենաց իշխանութեան տէր ըլլայ , պէտք էր որ  
 Հոգին Նստուած ալ , որ Քրիստոսի համբառնա  
 լին ետև իջաւ 'ի վերնատուն 'ի դասս առաքելաց ,  
 յատուկ շնորհատուութեամբ տարբերէր զՊետրո  
 սին իր մետասան եղբարցմէ կամ առաջ կամ յե  
 րայ , որ Պետրոսի ծայրագոյն իշխանութիւնը , այ  
 սինքն կաթողիկոսութիւնը կամ պատրիարքուիք  
 ստուգուէր : Քայց համարոյ Վաին հաւասարա  
 պարզ և Հոգին Նստուած Մրդւոյն Նստուծոյ հա  
 մաստախ եղբայր ընտրուածներուն հաւասար պար  
 զեց և իւր Նստուածութեան շնորհը : Քանզի  
 կ'ըսէ . « Ալ երևեցան նոցա բաժանեալ լեզուք  
 իբրև 'ի հրոյ և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նո  
 ցա , և լցան ամենեքեան Հոգւով սրբով , և սկը  
 սան խօսիլ յայլեայլ լեզուս , որպէս Հոգին տայր  
 բարբառել նոցա (Մրճ . բ . 3 .) » :

Քայց պէտք էր որ սուրբ Պետրոսի վրայ երկու  
 շնորհաց լեզու իջնար , որ իրաւամբ տարբերէր  
 իր եղբարցմէ , և անոնք ալ իրաւամբ լրենց կա  
 թողիկոսը ճանաչէին , և մանաւանդ Պալճեանին  
 նոր առաքելաձեռնադրութիւնը տեղի ունենար :  
 Քայց ոչ այնպէս եղաւ . քանզի ամենքն ալ Հոգի

ին շնորհքը ընդունելէն ետեւ, « Բարութիւնս նշանք և  
արուեստք 'ի ձեռս առաքելոցն գործէին » : Աւ-  
րեմն սուրբ Պետրոսի առանձնաշնորհաւթիք սուտ  
է և սխալ : Օտրմանք արդարեւ, առ շտեւ վարդա-  
պետը չեմք գիտեր որ հեթանոսութիւնոր գործած  
ժողովագեան համար երկար բարակ ճնօտ խնկեցը-  
նելով, քահանայական սրբադան կարգի իշխանու-  
թիք, որ Քրիստոսէ Տեառնէ մերմէ իր ընտրեալ  
աշակերտաց հաւասար տրուեցաւ, և առաքելոցմէ  
ալ յաջորդաբար իրենց առաքելայաջորդ հովուա-  
պետաց իջաւ : առաքելական իշխանութեամբ ձեռս  
'ի վերայ ընտրելոց դնելով հոգևոր հովիւ կարգել  
հաւատացեալ ժողովոցոց վրայ ամենատուրբ  
Հոգևոյն շնորհօք : որով իշխանութիւնս ունեցան  
ուսուցանել նոցա զօրէնս Աստուածային պատուի-  
րանաց, կապել և արձակել ըստ իւրաքանչիւր ար-  
ժանաւորութեան նոցին : Բայց այսօր, նոր առա-  
քելաձեռնագրիչ ըլլալով կայլայլէ զՅիսուսա-  
տուր իշխանութիւնս համապատիւ առաքելոց :  
Օտրթիք, ունին դիք, Հայոց ճշմարտասիրութեան  
վարդապետք, և զգուշացէք նորահնար գայթակ-  
ղեցուցիչ իրաւաբանութիւններէն :

Քրիստոսի մարմնով բռնուիր զիտէինք, բայց  
Աստուածութեամբը չէինք գիտեր, քանզի Հռով-  
մի աստուածաբանները, ըստ իւրեանց ինքնահա-  
ւան իրաւաբանութեան, որպէս թէ զՔրիստոս  
Պետրոսի կամաց կաշկանդելով, և իրեն յաջորդ-  
անուանեալ պապերուն ալ կամաց հեռեցնելով,  
նոր եկեղեցի կը սահմանեն, թողեալ զանունս  
րէնագրին Յիսուսի՝ օրինապահութեան պարտա-  
ւորեալ Պետրոսը գլուխ կը քարոզեն, և Յիսու-  
սի Քրիստոսի կը հաւասարեն, և աշխարհալոյս ա-  
ռաքելալները Պետրոսի կ'աշակերտեցնեն : ան Պեա-  
րոսն, որ Յովհաննու կ'ակնարկէր հարցանել Յի-  
սուսի, թէ ալ է իրենցմէ զինքը մատնողը, Պեա-

բոսի իբրև պաշտօնեայ կամ հրամանակատար կը  
 հարգեն : Ան Յովհաննէսը , որ առանց ինքնապար-  
 ծու թեան աներկիւղ և անվեհեր կաց մնաց խաչին  
 տակը առաջի խաչահանուացն , այսօր՝ անոր բա-  
 րոզութեամբ ՚ի Վրիտտոս հաւատացելոց առջիւր  
 իրենց իրաւաբանութեամբ արքայութեան գռնե-  
 րը կը փակեն , և գծիսոց գռները կը բանան :  
 Ան Յովհաննէսը , որ սիրով վարդապետին Յիսուսի  
 վառեալ՝ արտասուաց գետակ՝ իջեցունէր հանդէպ  
 աստուածահրաշ տեսարանին , խնամածելով և  
 ցաւալի տիրաւորն Վարիամայ , որուն յանձնեց  
 խաչին վրայէն ըսելով , թէ “ Ահա մայր բո ” , և  
 մօրն ալ , թէ “ Ահա որդի բո ” , զՅովհաննէսը  
 փոխանակ իրեն համարելով . այսօր երկչոտ և ըղ-  
 Տէր ժխտող Վերոսին հրամանին տակը լոկ եպիս-  
 կոսոս կը կարգեն : Թողուցեր են ճշմարիտ սիրոյ  
 և հաւատոյ տէրն և գլուխն , և ակն և կենդրոնն ,  
 զՎերոսն իբրև գլուխ հաւատոյ կը բարոզեն : Ա՛լ  
 ըրիտոսն ընդդէմ վարդապետութեանց , մեասաբեր  
 և նչ բնուին օգտաբեր : Ետ բարի կը ըլլար եթէ  
 աս նոր իրաւաբանութիւնեանց զՎերոսն մար-  
 մնով երկինքը հանէին Անովբին , Աղիսային , և Վով-  
 աէսին քովը , որն որ առաւել հաւանական կը թու-  
 էր , քան թէ Հռովմ տանելնին , և ջանալ տիրել  
 տալ նմա երկնի և երկրի երկրորդ Վրիտտոսութիւն .  
 կերևի թէ մարդարէքն ալ աս մասին սխալած են ,  
 որովհետև եթէ Վերոսս այսքան երկնի և երկրի  
 տիրապետական իշխանութեան արտօնութիւն պիտի  
 տեսնեար , պէտք էր որ անոր վայտը ալ մարդարէ-  
 անային : Բայց , ներեցէք , ի՞նչ կը ըսեմ ես ալ , թէ՛  
 սխալած են , սուտ ըլլալուն համար՝ չմարդարէացեր  
 են : Աւանդ յիմար և քակտիչ վարդապետութեց  
 նոցին , որ հալածիչ առաքեալ եղած՝ գիտես թէ  
 ուխտեալ են զՍոզոս առաքեալը ստանողաց պէս ,  
 չուտել , չիմել , մինչև զաղգն Հայոց իրենց բնիկ  
 ժողովրդեան պէս գայթակղեցրնելով , տեսակ տե-

ասկ թերահաւատութեան մէջ ձգելով օրական ,  
 ամսական , և տարեկան հոգեկորոյս աղանգներու  
 մէջ ձգել տալ : Այն , առ աստիճան մաշեցնեալ  
 է իրենց միաքր . ախանս , հաղար ախաս , մտ է  
 անոնց Արածեալ զոչխարս , որ փոխանակ արածեալին  
 զարապեա զոչխարսի դարձուցեր են , ու չեն զգաստա  
 նար : Սակրատ փիլիսոփային հարցունենք Եայնք  
 ինչ կ'ըսէ ասանկ անհոգ ժողովրդ ապետաց համար .  
 « Եթէ նմա , որում հաւատացան անդեայք ի պահ  
 պանութիւն , որ զուռքը նիհարացուցէ վնաս ,  
 հարկաւորաբար խոստովան լիցի զանձնէ գոյ վաս  
 անդէորդ » : Եւսմանակաւ քրիստոնէայք , մանա  
 ւանդ՝ բազում նահատակութեամբ զքրիստոնէու  
 թիւնք շահող Հայոց ազգը , որ զիրենք ծնան ի  
 հաւատս Քրիստոսի , այսօր կ'իրաւաբանեն և կը  
 այրայլեն . « Եթէ թշնամւոյն նախատեալ էր՝ համ  
 բերէի արդեօք : Բայց ասոնք , որ մեր հայրենա  
 կից , մեր համազգի և մեր քրիստոնէայ եղբարքն  
 են , ինչո՞ւ կեղծաւորութեան և կողմնասիրութեան  
 սահմաններէն և հպարտութեան լեռներէն՝ դուր  
 և հարթ սիրոյ անդաստանները չեն իջնար , խռու  
 վայոյղ կիրքերը չեն մերկանար , անոնց աւերիչ և  
 կործանիչ յիշատակութիւնները հիմակուան դու  
 ված դարուն լուսով լուսաւորեալ մտաց չեն ներ  
 կայացըներ . միթէ Քրիստոսի եկեղեցին հալածե  
 լով , ժողովրդոց առջև դժոխք բանալով պիտի  
 պսակուին Քրիստոսէն . դիտենք կը պսակուին ,  
 բայց մինակ իրենցմէ խաբուող պապէն և ոչ ու  
 ըրիչն :

Արրորդութեան անուան քաղցրութիւնը՝ երա  
 խան իր մօրը կաթին հետ ծծելով մեծնա  
 լով , և նոյն անուանով իր կենաց ընթացքէն ետե  
 մինչև վերջին հատկապէս շնչով իր կեանքը կնքող  
 ժողովուրդին իրաւաբանութիւն է քրիստոնէի տեղ  
 չի դնել , արքայութեան դուռը փակել , և դժո

խոց դռները բանալով գայթակղութիւն տալ յ  
 ով իրաւաբանութիւն, առանց իրաւե՛ իրաւաբա  
 նութիւն • Է՞ որ պղտիկ հաւատացեալի մը գայթ  
 թակղութիւն տուողին վիզէն՝ Բրիտանո Տէրն մեր  
 երկանաքար կախել ու ծախք խնայ լաւ արժան  
 տեաւ • Ե՞նչ իրաւաբանութիւն է հաւատոյ խնկ  
 տէրն, և տիրոջ սուրբ կամքերը կատարելու քա  
 թողութիւնները թողուլ և հաւատոյ պարտաւոր  
 եայր, հաւատոյ քարոզիչը, հաւատոյ նմանութիւնը  
